– Ամէն Պոլիս եկողներուն անունները ձեր Թերթին մէջ կը գրէ՞ք
– Գրեթէ ամէնն ալ, եթէ ձեզի պէս պատուաւոր ազգայիններ ըլ...
– Շատ լաւ, իմ անունս ալ գրեցէ՛ք. ես ալ պատուաւոր ազգայի...
Մեր քաղքին մէջ արտերու, եզներու, կովերու եւ ագարակներու...
եմ...:
– Հոգ մի՛ ընէք, խղճի եւ արդարութեան պարտք մը կատարելու համար
անոնք ալ կը գրեմ:
– Երկու-երեք հատ սպասաւոր ալ ունիմ... անոնք ալ լրագրոյ...
կողմը կրնա՞ս անցունել:
– Ինչո՞ւ չէ... Վաղը անպայման կը ղրկեմ լրագիրը՝ ընկալագր...
– Ընկալագրո՞վ... Ընկալագիրն ո՞վ է. տունս գիտէ՞:
– Ընկալագիրն Թուղթ մ'է, որուն մէջ կը գրեմ. «Ստացայ մեծապ...
Աբխողոմ աղայէն «...» լրագրոյ տարեկան բաժանորդագին մէկ...
ոսկի», եւ այդ Թուղթը ձեզի կը յանձնեմ, որով տարի մը իրաւունք...
նենաք իմ լրագիրս ընդունելու:


Մեծապատիւ Մուրացկան խմբագիրը

– Մէկուկէս ոսկի՜, շատ է...
քառորդ ոսկի չի՞ բաւեր:
– Խմբագիրները բաժանորդ...
վրայ սակարկութիւն չեն ընե...
– Շատ լաւ, ղրկեցէ՛ք ձեր լ...
եւ այն Թուղթը. բան մը կ'ընե...
– Սակայն չկարծէ՛ք, Թէ ես ...
նորդ գրելու նպատակով ձեզ...
նելու եկայ... Քաւ լիցի[3]. այդ ...
կութիւնը[4] չեմ ընդունիր. բ...
մական պարտք մը կատարե...
մար եկայ ձեզ տեսնելու: Բ...
մտքէն չանցունէք, Թէ այս ...
մէկուկէս ոսկի փրցնելու համ...
տեսնելու եկաւ:
– Չեմ անցուներ:
– Վասն զի կան խել մը[5] ...
կան խմբագիրներ, որք Պոլիս...
ները կողոպտելու համար անոնց քովը կ'երթան... Ես այդ բ...
կրնար ընել, վասնզի բնութեանս մէջ չկայ... Ես իբրեւ պա...
մարդ կ'ուզեմ ապրիլ:
– Հասկցայ. իբրեւ պատուաւոր մարդ կ'ուզես ապրիլ:
– Ինձ հետ ձեր ունեցած այս տեսակցութիւնն ալ ուրիշի մի՛ ...
վասնզի տեսակ մը բախտախնդիր, Թշուառական անձեր կան, ...
ղագուչական[6] կենսագրութիւններ կը գրեն եւ իմ անձնական...
կը խծբծեն[7]:
– Կը հասկնամ, անձնականութիւնդ կը խծբծեն:
– Օրինակի համար, սա պարագային մէջ յանցանք մ'ունի՞մ ե...
ողջմիտ[8] ազգային մը՝ լրագրոյս բաժանորդ գրուեցաք: Կ'աղաչ...
ձեր կոկո՞րդը սղմեցի, որ ինծի բաժանորդ գրուիք:
– Ամենեւին[9]:
– Ատրճանա՞կ ցուցուցի:
– Բնաւ երբեք:
– Դանա՞կ քաշեցի:
– Ո՛չ, բայց ուրիշ տեղեր ատրճանակ կամ դանա՞կ ցուցնելով ...
նորդ կը գրեն:
– Ատ ըսել չեմ ուզեր. ըսել կ'ուզեմ՝ դուք յօժար կամքով բա...
գրուեցաք:

2. Ստացագիր:
3. Բնաւ երբեք, Աստուած չընէ:
4. Վատութիւն, նուաստութիւն:
5. Մեծ թիւով:
6. Երեւակայական, յիմարական:
7. Աղտոտել, անարգել:
8. Իմաստուն, տրամաբանող:
9. Բնաւ, երբեք:

*– Այո:*

*– Եւ ես չվարուեցայ այն խմբագիրներուն պէս, որք օտարականի մը Պոլիս գալն իմանալնուն պէս՝ վազելով անոր տունը կ'երթան բաժանորդ գրելու համար:*

*– Այդ թշուառականներն իրաւունք չունին քու անձնականութիւնդ խծբծելու... Դուն վստահէ՛ ինծի...*

*– Շնորհակալ եմ ձեզմէ. մնաք բարով, Աբխողոմ աղա: Օր մը մեր խմբագրատունը հրամմեցէք խահուէ մը խմելու:*

*– Շատ աղէկ, օր մը կու գամ: Վաղուանին մէջ անցունելու չմոռնաք:*

*– Անհոգ եղէք:*

*Աբխողոմ աղան եւ խմբագիրն բաժնուեցան իրարմէ Բերայի քառուղւոյն առջեւ, ուր հասած էին խօսելով:*

## ՀԱՍԿՆԱԼ ՀԱՏՈՒԱԾԸ

1. Աբիսողոմի խօսքերէն ընտրել քանի մը օրինակներ, որոնք կը դրսեւորեն (ու կողմնակի՝ կը հեգնեն) իր տգիտութիւնը:
- Նոյնը՝ Աբիսողոմի սնափառութիւնը դրսեւորող ու հեգնող քանի մը խօսքերու համար:

2. Խմբագիրին խօսքերէն ընդգծել անոնք, որոնք լաւագոյնս *կը կիրարկեն Պարոնեանի մեթոտը - կեղծիքը բացայայտ եւ *ատելի դարձնել՝ բուռն կերպով իրարու հակադրելով իրականութիւն եւ խօսք:

3. Հատուածի գլխաւոր ժխտական տիպարին ընտրութիւնը իբրեւ հրապարակագիր-լրագրող՝ ի՞նչ յաւելեալ շեշտ ու իմաստ կը բերէ Պարոնեանի կեցուածքին, պատգամին:

I. ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵՂԾԻՔ

# Բ. «ՆՐԲԱՑՈՒՑԻՉ» ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԸ ՀԵՏ

17

*Այս թատերակի հերոսը՝ Պաղտասարը, արուգած է իր կնոջ՝ Անուշին անհաւատարմութիւնը, եւ դիմած է փաստաբանի՝ ապահովելու համար յանցաւորին պատիժը:*

*Սակայն փաստաբան Օգսէնը, յատուկ նպատակով, պիտի փորձէ *քողարկել կացութիւնը, շփոթեցնել ու վախցնել Պաղտասարը՝ անոր առջեւ դնելով իբր թէ «*մասնագիտական» արգելք մը - «*նրբացուցիչ դէպք յանցանաց»ը...*

*Գործի ամբողջութիւնը քննելով, կրնանք հաստատել, որ Պարոնեանի համար բո՛ւն յանցաւորը ո՛չ «նուրբ» Անուշն է իր *ձենգութեամբ, ոչ »կոշտ» Պաղտասարը՝ բռնութեան դիմելու իր պահանջով, եւ ոչ իսկ *շահախնդիր Օգսէնը: Մեծ երգիծաբանին թեւաւնկիւնը շատ աւելի լայն է...*

### ՏԵՍԻԼ Դ.

Պաղտ.– *Ինչպէ՞ս կրնայ կին մը բարի նպատակով խաբել, մատնել[1] իր էրիկն: Ի՞նչ խայտառակութիւն է աս... Ես խերը կ'անիծեմ այդ «նրբացուցիչ դէպք յանցանաց»ին[2] ալ, հնարողին ալ... Իմ կինս ինծմէ զատ ուրիշ անձ մը սիրած է... ոճիր գործած է. կախուելու արժանի է...:*

Օգսէն.– *Շատ կ'աճապարէք վճիռ տալու. համբերեցէ՛ք, որ օրէնքն խուզարկէ, հետազօտէ, քննէ, սերտէ եւ ուսումնասիրէ այն պատճառներն, որ ստիպած են կինդ սիրական մ'ունենալու: Թերեւս իրաւունք ունի ուրիշ մը սիրելու: Թողէ՛ք ուրեմն, որ սերտեմ խնդիրն, որպէսզի չկորսնցնենք դատը: Դուք կ'ուզէք, որ ձեր վկայութեան վրայ անմիջապէս պատժուի ձեր տիկինը: Կարելի չէ այդ: Շատեր ձեզի պէս իրենք զիրենք անմեղ կարծելով՝ դատ վարած են իրենց կնոջ դէմ, եւ ինքեանք[3] յանցաւոր եւ պարտաւոր ելած են դատարանէն:*

Պաղտ.– *Ըստ ձեզ անմե՞ղ է ուրեմն կինս:*

1. Հոս՝ դաւաճանել:
2. Փաստաբանը նոր բացատրած է, որ յանցանք մը կրնայ ունենալ իր «մեղմացնող պարագաներ»ը: